

« Գրքի ստեղծումը մագաղաթից մինչև աուդիոգիրք»

Սովորող՝ Նարինե Թադևոսյան

Ղեկավար՝ Նոնա Գրիգորյան

Գրախոս՝ Տաթև Աբրահամյան

Նարինե Թադևոսյանի աշխատանքը գրքի ստեղծման մասին պատմական ակնարկ է՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ներկայացված է հանգամանալից և ամբողջական: Հեղինակը ծավալուն աշխատանք է կատարել, ուսումնասիրել է տարբեր աղբյուրներում եղած տեսական նյութերը, համակարգել, ներկայացրել: Որպես հետազոտական աշխատանք լավ է, բայց պակասում է վերլուծական կամ գործնական աշխատանքը: Հեղինակի բուն ասելիքը, հետազոտությունից զատ, քիչ է կամ գրեթե չկա: Թեմայի արդիականության մասին ոչինչ չի ասվում: Եզրակացության մեջ խոսում է վերլուծության արդյունքների մասին, որը տեսանելի չէր բուն աշխատանքում: Լավ կլիներ, եթե եզրակացությունում ներկայացված կետերը ներկայացվեցին որպես վերլուծություն, ոչ թե զուտ տեղեկատվություն, այսինքն չսահմանափակվել միայն գրքի ստեղծման պատմության ներկայացմամբ:

Աշխատանքը տրամաբանական ամբողջությամբ է ներկայացված, ունի ներածություն, եզրակացություն, նշված են այն աղբյուրները, որտեղից օգտվել է շարադրելիս: